

Վ Ա Ս Տ Ա Կ Ե Ա Լ Ն Ե Ր Ի Ն

Վառ արշալոյսի բոյրեր ու երանգ,
Ու նոր տենչերի չքնաղ հորիզոն...
Որ աւետում են լոյսեր վերահաս—
Լոյսեր յաղթական ու կեանք երազուն...

...Ու դժւք, խարխլած, մութ նկուղներում,
Բեկուած շունչերով ողբացող մայրեր.
Որ սառ դիակներ ձեր սառ գրկերում,
Արտասւում էիք ամբողջ այս գիշեր...

Ու դժւք, որ օրուայ մեծ հոգսերի տակ
Ընկճուած, անզօր երազում էիք
Խաղաղ գիշերին մոռնալ ցաւ ու հոգ,
Բայց որ խաւարում էլ աւել լացիք...

Եւ դժւք, խաւարի ուժերից պարտուած,
Ու հալածական հողիններ չքնաղ,
Որ մութ բանդերում անզօր, շղթայուած,
Այս գիշերն ամբողջ տքնեցիք խաղաղ...

Եւ դժւք, ծովերում՝ գոռ, մրկապատ,
Նաւաբեկեալներ, որ մրրիկներին
Պարզած անվհեր ձեր ըմբոստ ճակատ՝
Տարում էիք դէպ անյայտը խորին...

Եւ դժւք, որ ուժեղ, անխախտ հաւատով
Թախծոտ աչքերնիդ սեւում դէպ վեր,
Այսքան գիշերներ անհուն կարօտով
Երազում էիք վառ արշալոյսներ...

Համր ու ամայի դաշտերում ընկած.
Եւ դժւք, վիրաւոր հերոսներդ արի,

Որ հետոմ էիք մենակ ու լքումս՝
Խաւարների մէջ արնոտ գիշերի...

Որ փնտռում էիք, ցաւոտ ու տրտում,
Ձեր հառաչներով խճւղ, անարձագանք,
Մի լոյս... գէթ մի անտղ մոայլ երկնքում,
Բայց որին, աւանդ, երբէք չգտաք...

Ելէք դուք, բոլոր հոգիներդ մունջ,
Ու բոլոր, բոլոր դուք արիւնաքամ
Տառապածներդ միշտ համր, անմոռնչ,
Ելէք, նոր կեանքով հպարտ այս անգամ...

Հպարտ... Թող կորչին ձեզնից խաւարի
Ու անյուսուլթեան սարսափներն անհուն,
Ելէք, նոր օրուայ աւետիք ձեզի,
Սրշալոյսներից ձեզ ողջոյն, ողջոյն...

Վառ արշալոյսի բոյլեր ու երազ,
Ու նոր տենչերի չքնանդ հորիզոն...
Որ աւետում են լոյսեր վերահաս —
Լոյսեր յաղթական ու կեանք երազուն...

Հր. Ֆալեան